80 ՓԱՍՏԱԲԱՆԻ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵԶԵԳԵԼՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ»

23.06.2022 12:19

Հարգելի փաստաբաններ,

Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ, բարերար Ռայմոն Եզեգելյանի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջև շարունակական համագործակցության շրջանակներում՝ **Ռայմոն Եզեգելյանը պատրաստակամություն է հայտնել՝ նվիրաբերության ձևաչափով, այս տարի նույնպես կանխավճարի կարգով վճարել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից սահմանած կարգով որոշված ևս 80 (ութսուն) փաստաբանի մեկ տարվա անդամավճարները:**

Նշված նախաձեռնության կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **21.06.2022թ. թիվ 134-Լ որոշմամբ** հաստատվել է **«80 փաստաբանի «Փաստաբան Եզեգելյան օժանդակություն» տրամադրելու մասին»** կարգը, համաձայն որի՝ շահառուներին որոշելու նպատակով ձևավորված հանձնաժողովը՝ ըստ կարգով նշված առաջնահերթության, նախապատվություն է տալու հետևյալ փաստաբաններին՝

1) *60-69 տարեկան փաստաբաններին*՝ ովքեր չունեն մշտական աշխատանք, **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է տարիքով ավագ փաստաբաններին.

2) *2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամություն ունեցող փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել վաղ հաշմանդամության կարգ ստացած փաստաբաններին.

3) *միայնակ մայր հանդիսացող փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 8 (ութ) փաստաբան:** Սույն կարգի իմաստով միայնակ մայր է համարվում ամուսնության մեջ չգտնվող այն կինը, ում խնամքի տակ գտնվում է առնվազն մեկ անչափահաս երեխա, որի ծննդյան վկայականում **(ա)** բացակայում է երեխայի հոր մասին գրանցումը, կամ, **(բ)** երեխայի հոր մասին գրանցումը կատարվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մոր ցուցումով, կամ, **(գ)** երեխայի հայրը մահացել է, կամ **(դ)** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով երեխայի հայրը ճանաչվել է անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած: Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ

երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ տարիքով կրտսեր երեխա ունեցող փաստաբաններին.

4) *ընտանիքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչված (զինվորական ծառայության մեջ գտնվող) զավակ ունեցող փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 7 (յոթ) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է՝ **(ա)** ընտանիքում մեկից ավելի զինծառայող ունեցող փաստաբաններին կամ **(բ)** զինվորական ծառայության առավել ուշ զորակոչված զորակոչիկ ունեցող փաստաբաններին.

5) *նյութական դժվարություններ ունեցող մարզի փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան,** յուրաքանչյուր մարզից մեկ փաստաբան՝ մարզային համակարգողի գրավոր առաջարկով.

6) *երկու կամ ավելի անչափահաս երեխաներ ունեցող փաստաբաններին*՝ **ոչ ավել, քան 15 (տասնհինգ) փաստաբան:** Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ տարիքով կրտսեր երեխա ունեցող փաստաբաններին.

7) 44 օրյա պատերազմի ընթացքում զոհված ընտանքի անդամ ունեցող, ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով զորահավաքին և ռազմական գործողություններին մասնակցած փաստաբաններին՝ **ոչ ավել, քան 20 (քսան) փաստաբան:**

Օժանդակությունից օգտվելու համար շահառուները կարող են դիմել հանձնաժողովին մինչև 2022 թվականի հուլիսի 7-ը (ներառյալ): Կարգին համապատասխան որոշված ընդհանուրը 80 շահառուներին կտրվեն համապատասխան հավաստագրեր։

Բեռնել «80 փաստաբանի «Փաստաբան Եզեգելյան օժանդակություն» տրամադրելու մասին» կարգը.

Բեռնել դիմումի ձևաթուղթը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })